ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում ՀՀ Լոռու մարզպետի կողմից համայնքների ղեկավարների հետ անցկացված խորհրդակցության

05.08.2019թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյան - մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ

Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Ադլոյանը, Ա.Գասպարյանը, Ս.Ասրյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք

Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական

Հրավիրված էին

ՀՀ Լոռու մարզի «Սննդամթերքի անվտանգության տեսչության» մարմնի ղեկավար- Գ.Ավետիսյանը,

«Հայանտառ» ՊՈԱԿ – ի տնօրեն Ա.Կարապետյանը

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ -Գ.Հակոբյանը

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի տեղակալ -Ա.Մաթևոսյանը

ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարները և այլ պաշտոնական անձինք:

Օ ր ա կ ա ր գ ա ն մ՝

1. **ՀՀ անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակներով թափուկ վառելափայտի տրամադրման մասին**

   (Զեկ.- «Հայանտառ» ՊՈԱԿ – ի տնօրեն – Ա.Կարապետյան)
2. **Մարզի բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վիճակի (շուկաներում առևտրի հետ կապված) և այդ ուղղությամբ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնակվելիք միջոցառումների մասին**

   (Զեկ.-մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար – Ա.Մխիթարյան)
3. **Համայնքների կողմից ներկայացված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին.**

   (Զեկ.-մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ – Հ.Մկրտչյան)
4. **Մարզի համայնքների բյուջեների 7 ամիսների սեփական եկամուտների կատարման մասին.**

   (Զեկ.-մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ - Ա. Բեջանյան)
5. **Լոռու մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության, մասնավորապես ՀՀ հողային օրենսգրքի և «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման պահանջների կատարման մասին.**

   (Զեկ.- հողաշինության և հողօգտագործման /մարզային պետական հողային տեսչության/ բաժնի պետ - Ա. Օհանյան)
6. **Մարզի ՀՈԱԿ-ներում աշխատող կենսաթոշակային տարիքի հասած աշխատակիցների (այդ թվում տնօրենների) աշխատանքային պայմանագրերի լուծման գործընթացի մասին.**

(Զեկ.- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ – Ա.Մատինյան)

7. Շնող և Ախթալա համայնքներից Նեղոցի հիմնական դպրոցի նախակրթարան սաների տեղափոխումը կազմակերպելու մասին.

(Զեկ.- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ – Ա.Մատինյան)

8. Մարզի համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման կարգի մասին.

(Զեկ.- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ - Ա.Ջանազյան)

9. Ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված նպաստառու ընտանիքների շրջանում մարզպետարանի կողմից իրականացված ուսումնասիրությունների մասին

(Զեկ.-մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ- Վ. Ջաղինյան)

10. ԼՂՀ Մարտակերտի շրջանին մարզի համայնքների կողմից ցուցաբերվելիք օգնության մասին

Հանձնարարվեց՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

ՀՀ Լոռու մարզի խոշորացված համայնքների ղեկավարների հետ կատարել շրջայցեր մարզի բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության վիճակի (շուկաներում առևտրի հետ կապված) ապահովման նպատակով և ձեռնարկել միջոցառումներ շրջայցերի ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Առաջարկվեց՝

ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1. ա/ ՀՀ անտառամերձ բնակավայրերում ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակներով թափուկ վառելափայտը կարիքավոր ընտանիքներին հատկացնելու նպատակով տրամադրել ոչ ավելի քան 8 մ խորանարդի կտրոն:
   բ/ Ապօրինի անտառահատումների կանխման նպատակով անհրաժեշտ համագործակցություն ցուցաբերել համապատասխան մարմինների հետ:
2. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և հսկողություն սահմանել որպեսզի համայնքներում իրականացվելիք ծրագրերը պարունակեն ճշտված ցուցանիշներ:
3. Խիստ ուշադրություն դարձնել և հետևողական լինել մարզի համայնքների բյուջեների կատարմանը և սեփական եկամուտների հավաքագրմանը:
4. ա/ Վարել «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության ստուգումների հաշվառման մատյան»՝ օրենքով սահմանված կարգով:
   բ/ Բացառել օտարվող, օգտագործման տրվող հողամասերի տրամադրելը գործառնական նշանակության խախտումներով, խախտումների նկատմամբ կիրառել վարչական տույժեր:
5. Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ ենթակետը, դադարեցնել մարզի ՀՈԱԿ-ներում աշխատող կենսաթոշակային տարիքի հասած աշխատակիցների / տնօրենների/ աշխատանքային գործունեությունը:
6. Բացառել կեղծ և անօրինական տեղեկանքների տրամադրելը ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված նպաստառու ընտանիքներին:

X

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Սող. Ս.Հովհաննիսյան